ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2019թվականի N 74

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1.Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4222 հոդվածի 1-ին եռամսյակից 650 000 դրամ տեղափոխել 08 բաժնի 02 խմբի 4 դասի <<Մշակութային միջոցառումներ>> ծրագրի 4239 հոդվածի 1-ին եռամսյակ:

2.Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում>> ծրագրի 4111 հոդվածից 2 520 000 դրամ տեղափոխել համայնքի բյուջեի 04բաժնի 02 խմբի 01 դասի << Գյուղատնտեսություն>> ծրագրի 4262 հոդված:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019 թ. մարտի
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2019թվականի N 75

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՆՐԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԹՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /Նկարագրական մաս/. Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Հենրիկ Սերյոժայի Աթոյանի կողմից իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տույժի:
Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի՝ 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Հենրիկ Սերյոժայի Աթոյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. Մարտի 05
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2019թվականի N 76

ԳԱԳԻԿ ՎԱՍԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , հիմք ընդունելով կատուցապատող Գագիկ Վասակի Գրիգորյանի դիմումը որոշում եմ ՝

1.Կառուցապատող՝ Գագիկ Վասակի Գրիգորյանին տալ թույլտվություն Ակունքի համայնքի գ.Ակունք Կենտրոնական խճուղի թիվ 104 /ծածկագիր ՝07-009-0050-0017 0.122հա բնակավայրի բնակելի կարուցապատման հողամասի վրա քարե պարիսպի կառուցման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին հողամասը պարսպապատել համաձայն տրամադրվող հատակագծի և շինարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. մարտի 05
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2019թվականի N 78

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8 և 13-րդ կետերով, հաշվի առնելով այն, որ քաղաքացի Հեղուշ Հարությունի Գրիգորյանի և Անդրանիկ Կարապետի Զենջիրյանի կողմից բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 15.40քմ ծածկոցի,1.96քմ սանհանգույցի և 11.8քմ պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Հեղուշ Հարությունի Գրիգորյանին և Անդրանիկ Կարապետի Զենջիրջյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացած անշարժ գույքին տրամադրել՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք գյուղ Կոտայք 1-ին փողոց թիվ 7/1հասցե:
2. Ակունք համայնքի Կոտայք գյուղի 1-ին փողոց թիվ 7/1 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 15.40քմ ծածկոցը,1.96քմ սանհանգույցը և 11.8քմ պարիսպը համարել օրինական:
3. Պարտավորեցնել քաղաքացուն ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքային բյուջե՝ 900105203211 հաշվեհամարին վճարել 22745/քսաներկու հազար յոթ հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Մարոզ Սահիբեկյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 թ.

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2019թվականի N 79

ՎԱՉԱԳԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11,22-րդ կետերի պահանջներով,<<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ կողմից տրամադրված չափագրումներով, Վաչագան Շահնազարյանի դիմումով, որով խնդրել է օրինական ճանաչել իրենց կողմից ինքնակամ կառուցված Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղ Ակունք 13-րդ փողոց, թիվ 12 հասցեի բակելի տունը և հաշվի առնելով,
որ սեփականության իրավունքով նրանց պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառոցված չէ քաղաքաշինության նորմերի էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. որոշում եմ

1. Վաչագան Շահնազարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղ Ակունք 13-րդ փողոց թիվ 12 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված 202,50 քմ բնակելի տունը համարել օրինական:
2. Պարտավորեցնել կառուցապատողին ինքնակամ կառույցների օրինականացման համար համայնքային բյուջե /հաշվեհամար 900105203211/ վճարել՝ 202,5Х1300=263.250դրամ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ.

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2019թվականի N 80

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 67 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, որոշում եմ՝

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 26-ի «Պապին Արծրունու Սաղաթելյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը և ավտոտնակը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 67 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

   1)որոշման նախաբանում « հաստատված կարգի,» բառերից հետո լրացնել « և 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով ու 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերով »բառերով:
   2)որոշման 1-րդ կետում «պարիսպը» բառերից հետո լրացնել «ճանաչել օրինական և» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. մարտի 11
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2019թվականի N 81

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 22-ի N 31-Ա որոշման 2-րդ կետի ,Ակունքի համայնքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների ,սելավների և սողանքների կանխարգելման ,հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով `որոշում եմ `

1. Հաստատել՝
1) Ակունքի համայնքի տարածքում 2019թվականի հնարավոր ջրհեղեղների,հեղեղումների սելավների և սողանքների կանխարգելման ,հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը համաձայն հավելված 1-ի :
2) տեղեկությունները համայնքի հեղեղային կառույցների վերաբերյալ համաձայն հավելված 2-ի :
3) առաջարկությունները համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ համաձայն 3-9 հավելվածների :
2. Մինչև մարտի 20-ը Կոտայքի մարզային փրկարարական ծառայություն ներկայացնել սույն որոշման առաջին կետով հաստատված փաստաթղթերը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վլադիկ Աբրահամյանի վրա :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2019թվականի N 82

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. Համայնքի բյուջեի 08 բաժնի 02 խմբի 3 դասի <<Մշակույթ>> ծրագրի 5113 հոդվածից 950 000 դրամ տեղափոխել 06 բաժնի 04 խմբի 1 դասի <<Փողոցային լուսավորություն>> ծրագրի 5122 հոդված:

2. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4252 հոդվածից 80 000 դրամ տեղափոխել 4235 հոդված:

3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր ,գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4252 հոդվածից 50 000 դրամ տեղափոխել 4212 հոդված:

4. Համայնքի բյուջեի 09 բաժնի 01 խմբի 1 դասի <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրի 4251 հոդվածից 173 000 դրամ տեղափոխել 4212 հոդված:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. մարտի 11
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2019թվականի N 83

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արմեն Մահմեդի Քալաշյանը, հանդիսանալով գույքահարկի և հողի հարկ վճարող սուբյեկտ, <Գույքահարկի> և <Հողի հարկի մասին> օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկի և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 01.03.2019-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի և հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող թիվ 147-004, 026-003, 006-001, 110-009, 109-007, 130-023, 201-015, 201-017, 201-018, 202-007 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար՝ 0.77 հա, 0.13 հա, 0.5 հա, 0.45 հա, 0.84 հա, 0.71 հա, 0.12 հա, 0.73 հա, 0.96 հա, 0.1 հա, 0.79 հա մակերեսներով հողամասերը և 026-003 կադաստրային ծածկագրով Կոտայք գյուղի 3-րդ փողոց թիվ 35 հասցեի շինությունը և 006-001 կադաստրային ծածկագրով անասնաշենքը հանդիսանում են քաղաքացի Արմեն Քալաշյանի սեփականությունը, որոնք <Գույքահարկի > և <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: Հողամասերի համար վճարման ենթակա հարկը կազմում է 261.930 ՀՀ դրամ, որից ապառք՝ 162.131 ՀՀ դրամ, իսկ հողի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 99.799 ՀՀ դրամ: Հողի հարկի գծով պարտավորություններն առաջացել են 2012-2018թթ ժամանակահատվածում վճարումներ չկատարելու արդյունքում: Իսկ շինության համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 113.141 ՀՀ դրամ, որից ապառք՝ 80.286 ՀՀ դրամ, իսկ 32. 855 ՀՀ դրամը՝ գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ: Գույքահարկի գծով պարտավորություններն առաջացել են 2015-2018թթ ժամանակահատվածում վճարումներ չկատարելու արդյունքում:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Արմեն Քալաշյանը 11.03.2019թ-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է /հիմք՝ քաղաքացի Արմեն Քալաշյանի կողմից ծանուցագիրը 05.03.2019թ. ստանալու մասին ստորագրությունը/: Վերջինս չի ներկայացել է վարչական վարույթ լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

<< Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարելպարտադիրայլվճարումներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ 1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

Համաձայն հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, «Գույքահարկի մասին» օրենքի 2-րդ, 3-րդ, «Հողի

հարկի մասին» օրենքի 1-ին, 16-րդ, հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի Արմեն Քալաշյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջե գանձել 375.071 ՀՀ դրամ, որից 261.930 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, այդ թվում ապառք՝ 162.131 ՀՀ դրամ, իսկ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ՝ 99.799 ՀՀ դրամ և 113.141 ՀՀ դրամ, որպես շինության համար վճարման ենթակա գույքահարկի գումար, այդ թվում ապառք՝ 80.286 ՀՀ դրամ, իսկ 32.855 ՀՀ դրամը՝ գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. մարտի 11

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2019թվականի N 84

ՀԱՍՄԻԿ ԻԳՈՐԻ ԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի մարտի 11-ի կարիքի գնահատման թիվ 9 արձանագրությունը և Ակունք համայնքի Ակունք գյուղի բնակիչ Հասմիկ Իգորի Թևոսյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի բնակիչ Հասմիկ Իգորի Թևոսյանին տրամադրել ֆինանսական օգնություն 40000 / քառասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. մարտի 12
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2019թվականի N 85

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 309 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ՝

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի «Ակունքի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 309 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. Մարտի 12.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2019թվականի N 86

ԳԵՂԵՑԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով 2019 թվականի մարտի 12-ի կարիքի գնահատման թիվ 10 արձանագրությունը և Ակունք համայնքի Զառ բնակավայրի բնակիչ Գեղեցիկ Սերյոժայի Վարդանյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի Զառ բնակավայրի բնակիչ Գեղեցիկ Սերյոժայի Վարդանյանին տրամադրել ֆինանսական օգնություն՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 13 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2019թվականի N 87

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՐՍՊԱՊԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , հիմք ընդունելով կատուցապատող Վարուժան Գևորգի Հակոբյանի դիմումը որոշում եմ ՝

1.Կառուցապատող Վարուժան Գևորգի Հակոբյանին տալ թույլտվություն Ակունքի համայնքի գ.Նոր գյուղ ծածկագիր ՝07-049-204-068, 11555հա գյուղատնտեսական այլ հողատեսքի հողամասի վրա քարե պարիսպի կառուցման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019թ. մարտի
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2019թվականի N 88

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 50-րդ կետի ,հիմք ընդունելով Աննա Կոստանդյանի դիմումը՝որոշում եմ ՝

1. Փայլակ Արշակ Մելդոյանին սեփականության իրավունքով պատկանող ծածկագիր 07-027-0010-0009 , 0,0936հա հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ համայնք Ակունք գյուղ Զառ, փողոց Գրիգոր Լուսավորիչ 4:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 89

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 78 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ի մասով, որոշում եմ

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 5-ի «Անշարժ գույքին հասցե տրամադրելու և ինքնակամ շինությունների օրինականացման մասին» թիվ 78 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները
   1)որոշման 2-րդ կետում «11.8քմ» բառերը փոխարինել «11.8գծմ՝ 2.8քմ» բառերով:
   2)որոշման 3-րդ կետում «22745/քսաներկու հազար յոթ հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ » բառերը փոխարինել «15725/տասնհինգ հազար յոթ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ» բառերով:
   2Ավել կատարված վճարման տարբերությունը վերադարձնել քաղաքացուն
   3.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2019թվականի N 90

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԻԿՏՈՐ ԼԵՎՈՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.

Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Վիկտոր Լևոնի Պողոսյանի կողմից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տուժի:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Վիկտոր Լևոնի Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. մարտի 15
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2019թվականի N 91

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՈՌՆ ՏՀԱՐԻ ՀԱՍՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.

Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Թոռն Տհարի Հասոյանի կողմից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տուժի:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Թոռն Տհարի Հասոյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. մարտի 18
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2019թվականի N 92

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԵՎՈՆ ՀՄԱՅԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.

Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Լևոն Հմայակի Մարտիրոսյանի կողմից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տուժի:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Լևոն Հմայակի Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. մարտի 18
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2019թվականի N 93

ՄԻԱՎՈՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գեղամ Վազգենի Առաքելյանի դիմումը, որով խնդրել է իրեն պատկանող անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացացած գույքին տրամադրել նոր հասցե և օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02112017-07-0097 և սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 884350 վկայականներ, «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ» ԱՁ-ի կողմից 2019 թվականի մարտի 15-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ» ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գեղամ Վազգենի Առաքելյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող միավորվող հողակտորում 2016,2017 և 2018 թվականներին ինքնակամ կառուցել է բնկելի տուն՝ 131.44 քմ,բաց պատշգամբ 3,8քմ,ձեռնահարկ 84,10քմ,սանհանգույց 8,11քմ,ջրավազան 6,69քմ,աստիճան 6,76քմև պարիսպ 5,96քմ արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 28 և 29-րդ կետերի պահանջներով,Հայաստանի Հանրապետության կատավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով,որ ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. ՔաղաքացիԳեղամ Վազգենի Առաքելյանին սեփականությանիրավունքով պատկանող /ծածկագիր 07-049-0038-0002 և 07-049-0038-0034/ անշարժգույքերի միավորման արդյունքում առաջացա ծանշարժգույքին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ ՆորԳյուղ 1-ին փողոց թիվ 65:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2019թվականի N 94

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1.Համայնքի բյուջեի 08 բաժնի 02 խմբի 3 դասի <<Մշակույթ>> ծրագրի 5113 հոդվածից 200 000 դրամ տեղափոխել 5134 հոդված:

2. Համայնքի բյուջեի 08 բաժնի 02 խմբի 03 դասի <<Մշակույթ>> ծրագրի 4269 հոդվածից 200 000 դրամ տեղափոխել 08 բաժնի 02 խմբի 04 դասի <<Այլ մշակութային միջոցառումներ>> ծրագրի 4239 հոդված:

3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում>> ծրագրի 4222 հոդվածի 1-ին եռամսյակից 50 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4269 հոդվածի 1-ին եռամսյակ:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19թ. Մարտի

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՐՏԻ 2019թվականի N 95

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ,ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՌՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հեդվածի 1--ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 20-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության կառավարության2016 թվականի մարտի 26-ի թիվ 550-Ն որոշման , հիմք ընդունելով Ակունք համայնքի ավագանու 2019թվականի մարտի 14-ի թիվ 18 որոշումը ,որոշում եմ `

1. Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեք,հասցեն՝ համայնք Ակունք գյուղ Ակունք , 0.11789 հա հողամասը/ծածկագիր `07-009-0722-0002/ ընդլայնման նպատակով ,ուղղակի վաճառքով օտարել հողամասին կից/ծածկագիր 07-009-0101-/սեփականատեր Վարդան Ալբերտի Ամիրյանին 150 000 դրամով

2.Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեք,հասցեն՝ համայնք Ակունք գյուղ Ակունք, 0.11969 հա հողամասը/ծածկագիր `07-009-0722-0004/ ընդլայնման նպատակով ,ուղղակի վաճառքով օտարել հողամասին կից/ծածկագիր 07-009-0101-/սեփականատեր Միքայել Վլադիմիրի Վանեցյանին 150 000 դրամով

3.Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեք,հասցեն՝ համայնք Ակունք գյուղ Կոտայք, 0.1759 հա հողամասը/ծածկագիր `07-038-0110-0090/ ընդլայնման նպատակով ,ուղղակի վաճառքով օտարել Միքայել Վլադիմիրի Վանեցյանին հողամասին կից/ծածկագիր 07-038-0110-/սեփականատեր 200 000 դրամով

4.Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեք,հասցեն՝ համայնք Ակունք գյուղ Կոտայք, 0.29380 հա հողամասը/ծածկագիր `07-038-0110-0091/ ընդլայնման նպատակով ,ուղղակի վաճառքով օտարել հողամասին կից/ծածկագիր 07-038-0110-0088/սեփականատեր Վարդան Ալբերտի Ամիրյանին 350 000 դրամով

5.Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեք,հասցեն՝ համայնք Ակունք գյուղ Նոր գյուղ, 0.07631 հա հողամասը/ծածկագիր `07-049-0291-0004/ ընդլայնման նպատակով ,ուղղակի վաճառքով օտարել հողամասին կից/ծածկագիր 07-049-0291-0003/սեփականատեր Էդիկ Գուրգենի Հովակիմյանին 300 000 դրամով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/03/19
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՐՏԻ 2019թվականի N 96

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 309 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ՝

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Ակունքի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 309 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ.
գ. Ակունք